ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ: ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ:

Նախընտրական հիմնադրամ բացելու պարտավորությունը ծագում է Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը ***գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում*** *(վերջնաժամկետը 2023թ. օգոստոսի 23-ն է):*

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների միջոցները հավաքվում են հետևյալ առևտրային բանկերից որևէ մեկում.

- ✓ ***«Ակբա բանկ» ԲԲԸ***
- ✓ ***«Արդշինբանկ» ՓԲԸ***
- ✓ ***«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ***
- ✓ ***«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ***
- ✓ ***«Յունիբանկ» ԲԲԸ***

Առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորել չեն կարող՝

- *կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները.*
- *կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուները.*

Նախընտրական հիմնադրամի միջոցների նկատմամբ չի կարող կիրառվել արգելանք, այդ միջոցները չեն կարող հանդիսանալ բռնագանձման առարկա՝ ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի նախընտրական քարոզչության հետ չկապված անձնական բնույթի պարտավորություններով։

ՀՀ ընտրական օրենսգիրք, 26-րդ հոդված, մաս 8

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների դիմումների հիման վրա կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի անվամբ բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, որոնք պետք է ունենան անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնելու հնարավորություն (օնլայն բանկինգ, վճարային քարտ և այլն):

Այդ հաշվեհամարի բացման համար դիմումատուի և բանկի միջև կնքվում է բանկային հաշվի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ժամանակավոր հատուկ հաշվեհամարներից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում:

ՀՀ ԿԸՀ 18.09.2021թ. N 220-Ն որոշում

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի

ընտրելու իրավունք ունեցող անձանց նվիրատվություններ

ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի դեպքում՝ դաշինքի անդամ կուսակցությունների նվիրատվություններ

ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի նվիրատվություններ

ՉՆՇՎԱԾ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախ-ընտրական հիմնադրամ-ների հաշվին մուծված գումարները, ինչպես նաև նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների՝ Ընտրական օրենսգրքի սահմանված առավելագույն չափերը գերազանցող մասերը փոխանցվում են պետական բյուջե:

Պետական բյուջե են փոխանցվում նաև նախընտրական հիմնադրամների հաշվին կատարված անանուն մուծումները:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ

Ընտրական օրենսգրքով և սույն ուղեցույցով, որպես նվազագույն աշխատավարձի հաշվարկային հիմք ընդունվում է 1000 դրամը:

	Նախընտրական հիմնադրամ նվիրատվություն կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը	***Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը***
1.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը՝ նվազագույն աշխատավարձի 300.000-ապատիկը	**300.000.000 ՀՀ դրամ**
2.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին՝ նվազագույն աշխատավարձի 300.000-ապատիկը	**300.000.000 ՀՀ դրամ**
3.	Ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն՝ նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկը	**1.000.000 ՀՀ դրամ**
4.	Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը	**100.000 ՀՀ դրամ**

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՌԱՆՁԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ:

		Առավելագույն չափ
	Նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը նախընտրական ծախսերի ֆինանսավորման համար իրավունք ունի ծախսելու՝ նվազագույն աշխատավարձի 300 000-ապատիկը չգերազանցող գումար	**300.000.000 ՀՀ դրամ**

Նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին են կատարվում (ֆինանսավորվում)՝

- *զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման ծախսերը.*
- *համացանցով նախընտրական քարոզչության իրականացման, այդ թվում՝ քաղաքական գովազդի հրապարակման ծախսերը.*
- *նախընտրական քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացման ծախսերը.*
- *նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման ծախսերը.*

- *ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսերը.*
- *քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, փակցման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի, ներառյալ տպագիր նյութերի պատրաստման ու տարածման հետ կապված ծախսերը.*
- *նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարձակալության հետ կապված ծախսերը (բացառությամբ մինչև 7 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների).*
- *նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կազմակերպված մշակութային կամ մարզական միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը.*
- *վստահված անձանց տրվող փոխհատուցման ծախսերը, եթե մեկ վստահված անձի հաշվով փոխհատուցման գումարը գերազանցում է 10 000 դրամը:*

Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և ընտրական շտաբների **կոմունալ ծախսերը**, ինչպես նաև **նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապված ծախսերը** կարող են չներառվել նախընտրական հիմնադրամում:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ ***21.08.2023-ից սկսած 3 աշխատանքային օրը մեկ*** *Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:*

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք և այն տեղադրում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ ***www.elections.am****:*

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Վերահսկիչ-վերատուգիչ ծառայություն ներկայացվում են՝

Նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ **10-րդ օրը**

2023թ. սեպտեմբերի 1-ին

Նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ **20-րդ օրը**

2023թ. սեպտեմբերի 11-ին

Ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահման-ված ժամկետից **ոչ ուշ, քան 3 օր առաջ**

մինչև 2023թ. սեպտեմբերի 21-ը

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-րդ մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են անհատույց կամ շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:

Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են քվեարկության օրվանից՝ 2023թ. սեպտեմբերի 17-ից:

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի դիմումի (Հավելված 1) հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

(ՀՀ ընտրական օրենսգիրք 27-րդ հոդված, 7-8 մասեր)

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄՆԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

Ընտրությունից հետո կուսակցության, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ ***մեկշաբաթյա ժամկետում***, փոխանցվում են կուսակցության հաշվին, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ:

Ընտրությունները չկայացած կամ անվավեր ճանաչվելու և նոր ընտրություններ նշանակվելու դեպքերում նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները սառեցվում են մինչև նոր ընտրությունների համար ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը: Նոր ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կարող են օգտագործել իրենց նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները:

Նոր ընտրություններին չմասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները ***մեկշաբաթյա ժամկետում*** փոխանցվում են կուսակցության հաշվին, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ:

(ՀՀ ընտրական օրենսգիրք 27-րդ հոդված 9-11 մասեր)

ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1 Եթե Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար ձեռք բերված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ:

Եթե վարույթի ընթացքում հիմնավորվում է նշված տեղեկությունը, ապա կուսակցության, կուսակցություն-ների դաշինքի նկատմամբ կիրառվում է ***վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով***:

2 Եթե հիմնավորվում է, որ կուսակցության, կուսակցությունների դաշինքի նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են սահմանված ուղղություններով կատարված ծախսերի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ, և եթե վարույթի արդյունքում հիմնավորվում է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա կուսակցության, կուսակցությունների դաշինքի նկատմամբ **կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով:**

3 Եթե նախընտրական քարոզչության համար սահմանված ուղղություններով ծախսված գումարի և պետական բյուջե վճարվող տուգանքի գումարի չափի և նախընտրական հիմնադրամի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ սահմանված առավելագույն չափի 20 տոկոսը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիմումի հիման վրա **դատարանն ուժը կորցրած է ճանաչում ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը:**

! Վճարվող տուգանքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումից հետո՝ 5-օրյա ժամկետում, պետական բյուջե չփոխանցելու կամ նույն ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով չբողոքարկելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված գումարը գանձում է դատական կարգով:

(ՀՀ ընտրական օրենսգիրք 27-րդ հոդված, 3-6 մասեր)

«1. Թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, եթե դա բացելը օրենքով սահմանված պարտականություն է, նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը, հայտարարագիրն օրենքով սահմանված կարգի խախտմամբ ներկայացնելը կամ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով»

(ՎԻՎ ՀՀ օրենսգիրք 40.3-րդ հոդված)

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական
հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 18-ի N 220-Ն որոշման

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման

_____ ընտրության անվանում

_____ թեկնածուի անուն, հայրանուն, ազգանուն, կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում

_____--_____
հաշվետու ժամանակահատված

Մուտքեր			Ծախսեր					
Հիմնադրամ կատարված նվիրատվությունների ժամանակագրությունը	Նվիրատվության գումարի չափը (<< դրամ)	Նվիրատվություն կատարած անձանց տվյալները	ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրությունը	ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանումը	Ծախսերի չափը (<< դրամ)		ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալները	ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը
					Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը	ԸՕ 27-րդ հոդվածի 1-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը		
1	2	3	4	5	6	7	8	9
Ընդամենը			Ընդամենը					

Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը	
Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը	

Հիմնադրամում մնացած գումարի չափ	

Հայտարարագիրը բաղկացած է _____ թերթից, կից պայմանագրերը, փաստաթղթերը՝ _____ թերթից:

_____
թեկնածուի ստորագրություն, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն, օր, ամիս, տարեթիվ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի ու ժամկետների

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը հայտարարագիրը ներկայացնում է **թղթային տարբերակով** և **էլեկտրոնային կրիչով՝** Adobe Acrobat (*.pdf) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ:

Հայտարարագրի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարագրի՝

- ✓ «ընտրության անվանում» տողում լրացվում է՝ **«Երևանի ավագանու ընտրություններ»**.
- ✓ «կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում, տողում լրացվում է հայտարարագիրը ներկայացնող կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը.
- ✓ «հաշվետու ժամանակահատված» տողում
  - ! **Որպես հաշվետու ժամանակահատվածի սկիզբ** բոլոր հայտարարագրերում՝ լրացվում է կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցման օրը, ամիսը, տարեթիվը:
  - ! **Առաջին հայտարարագրերի դեպքում** որպես հաշվետու ժամանակահատվածի վերջ լրացվում է՝ 2023թ. սեպտեմբերի 1-ը:

- ! **Երկրորդ հայտարարագրերի դեպքում** որպես հաշվետու ժամանակահատվածի վերջ լրացվում է՝ 2023թ. սեպտեմբերի 11-ը:
- ! **Երրորդ հայտարարագրերի դեպքում** որպես հաշվետու ժամանակահատվածի վերջ լրացվում է՝ 2023թ. սեպտեմբերի 17-ը:

Յուրաքանչյուր հաջորդ հայտարարագիր իր մեջ պետք է ներառի նախորդ հայտարարագրերի տվյալները:

«Մուտքեր» մասի.

- ✓ «Հիմնադրամ կատարված նվիրատվությունների ժամանակագրությունը **1» սյունակի** յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են մուծումները,
- ✓ «Նվիրատվության գումարի չափ 2» սյունակում լրացվում է յուրաքանչյուր օրվա նվիրատվության ընդհանուր չափը՝ ՀՀ դրամով,
- ✓ «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամ մուծված գումարի չափը **2» սյունակում** նշված գումարների ընդհանուր չափը,
- ✓ «Նվիրատվություն կատարած անձանց տվյալները 3» **սյունակում՝** ֆիզիկական անձանց դեպքում լրացվում է անունը, ազգանունը, հայրանունը՝ անձը հաստատող փաստաթղթերում առկայության դեպքում), կուսակցության դեպքում՝ կուսակցության անվանումը:

«Ծախսեր» մասի.

- ✓ «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրությունը **4» սյունակի** յուրաքանչյուր տողում

ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են ծախսերը, իսկ մինչև հիմնադրամի ձևավորումը ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դեպքում լրացվում է «մինչև հիմնադրամի ձևավորում» բառերը կամ դրանց հապավումը՝ «ՄՀՁ»,

- ✓ «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանումը **5» սյունակում՝** ըստ օրերի, առանձին տողերում լրացվում է պատրաստման նպատակով ձեռք բերված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի անվանումը,
- ✓ «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը **6» սյունակում** լրացվում է 5-րդ սյունակում նշված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման համար կատարած ծախսի փաստացի չափը: Այն դեպքերում, երբ 5-րդ սյունակում նշված ապրանքը կամ ծառայությունը ձեռք է բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ինչպես նաև անվճար ստացման դեպքում, ծախսի փաստացի չափը նշվում է «0 (զրո)»,
- ✓ «ԸՕ 27-րդ հոդվածի 1-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը **7» սյունակում** նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքը: Եթե «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 6» սյունակում նշված գումարը համընկնում է հայտարարագրման ենթակա ձեռք բերված ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքի հետ, ապա 7-րդ սյունակում նշվում է նույն թիվը: Մինչև հիմնադրամի ձևավորումը ստացված ապրանքների և

ծառայությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ստացված հայտարարագրման ենթակա ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը 6-րդ սյունակում նշված թվից ավելի բարձր է, նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը,

- «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալները **8» սյունակում** լրացվում է 5-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալները (պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, վճարման անդորրագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը և այլն),
- «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը **9» սյունակում** լրացվում է 5-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման մասով դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը, եթե այդպիսիք առկա են: Եթե հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման մասով վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորություններ առկա չեն, ապա նշվում է «0 (զրո)»,
- **«Ընդամենը» տողում** լրացվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 6» սյունակում

նշված թվերի ընդհանուր չափը և «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը 7» **սյունակում** նշված թվերի ընդհանուր չափը:

- ***«Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը»*** *տողում նշվում է հիմնադրամից կատարված, հայտարարագրման ոչ ենթակա, ուստիև հայտարարագրի մյուս տողերում չներառված ծախսերի ընդհանուր չափը:*

- ***«Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը»*** *տողում նշվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 6» սյունակի «Ընդամենը» տողի և «Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը» տողի թվերի գումարը:*

- ***«Հիմնադրամում մնացած գումարի չափ»*** *տողում լրացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջում հիմնադրամում մնացած չօգտագործված գումարի չափը, որը հավասար է «Նվիրատվության գումարի չափը 2» սյունակի ընդամենը տողի և «Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը» տողի թվերի տարբերությանը:*

- *Հայտարարագրի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրի թերթերի և դրան կից պայմանագրերի, փաստաթղթերի թերթերի թվերը:*

Հայտարարագիրը ստորագրում է կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը, լրացվում է հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը, լիազոր ներկայացուցչի ստորագրելու դեպքում՝ լրացվում է նրա անունը, հայրանունը, ազգանունը:

Հավելված 1

Առաջարկվող օրինակելի ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

_____

(ընտրության անվանումը)

_____

(կուսակցության, կուսակցությունների դաշինքի

լիազոր ներկայացուցչի անունը, հայրանունը,ազգանունը)

ԴԻՄՈՒՄ

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ խնդրում եմ թույլատրել նախընտրական հիմնադրամից վճարումներ կատարել քվեարկության օրվանից հետո՝ մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

Կից ներկայացվում է մինչև քվեարկության օրը կատարված գործարքների պայմանագրերի պատճենները:

Առդիր՝ ____ թերթ:

Դիմող ՝_____ _____

(Անունը, ազգանունը) (ստորագրությունը)

(Նշվում է ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը)